

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	Վանաձոր
ՄԱՐԶ	Լոռի



1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Տաշիր-Ձորագետի շրջանը և հատկապես Վանաձոր քաղաքի տարածքը հարուստ են մեծ ու փոքր հնագիտական հուշարձաններով («Թագավորանիստ», «Մաշտոցի բլուր», «Քոսի ճոթեր»), բրոնզե դարի և վաղ երկաթի դարաշրջանի (մ.թ.ա. III հազարամյակ) դամբարաններով: Այստեղ ծաղկում է ապրել խեցեգործությունը, զարգացել է մետաղագործությունը:

Բնակավայրի մասին միջնադարից մեզ հասած շատ տեղեկություններ չեն պահպանվել: Միակ հետքը Վանաձորի կիրճում գտնվող Պապանի գյուղն է:

Գուգարքի հետ միասին՝ Վանաձորի տարածքում գտնվող բնակավայրը մ.թ.ա. II դարում եղել է Մեծ Հայքի, իսկ մ.թ. X դարում՝ Կյուրիկյան թագավորություն կազմի մեջ: Ենթադրվում է, որ Ղարաքիլիսա (Սև եկեղեցի) անունը թաթարական է, տրվել է XIII դարի սկզբներին Վանաձորի հյուսիսային բլրի վրա գտնվող սև քարից կառուցված եկեղեցու անունով:

1801թ. Վրաստանի հետ Ռուսաստանին է անցնում նաև Լոռին, և Ղարաքիլիսան դառնում է սահմանային զորակայան: 1849թ. Ղարաքիլիսան Երևանի նահանգի մեջ էր: 1870թ. Դիլիջան-Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ ճանապարհի, իսկ 1899թ. Թիֆլիս-Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ երկաթուղու, կայարանի, փոստատան և իջևանատների կառուցումը նպաստեց գյուղաքաղաքի ձևավորմանն ու զարգացմանը:

1812թ. Եվրոպացի ճանապարհորդներ Ջեյմս Մորիերը և Ռոբերտ Հերփորթը տեսել են փայտե, հողածածկ տներով մի խղճուկ գյուղակ: Իսկ 1829թ. Ղարաքիլիսա եկած Խաչատուր Աբովյանը վկայում է, որ այստեղ հազիվ 500-600 բնակիչ կար, որոնք գաղթել էին Երևանից: Հետագայում Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, Ղարաքիլիսայում բնակություն են հաստատել Արևմտյան Հայաստանի Կարս, Արդահան, Բայազետ, Էրզրում քաղաքներից գաղթած մի քանի հարյուր հայ ընտանիքներ:

Նախախորհրդային շրջանում այստեղ գործել են եկեղեցական, ծխական (հիմնվել է 1853թվականին), օրիորդաց (1879), պետական երկդասյա ռուսական (1897) և ռուս պաշտոնյաների երեխաների (1908) դպրոցներ:

Վանաձորը քաղաքային բնակավայր է 1924թվականից: 1929-1930թվականներին կազմվել է Ղարաքիլիսայի (հետագայում՝ Կիրովական, այնուհետև Վանաձոր) առաջին հատակագիծը (ճարտարապետներ՝ Կարո Հալաբյան, Միքայել Մազմանյան, Գևորգ Քոչար), որով նախատեսում էր քաղաքի տարածքն ընդլայնել արևմտյան և արևելյան ուղղություններով՝ Դիմաց թաղամասում: Մինչև 1935թ. կոչվել է Ղարաքիլիսա: 1935թ. հունվարին Հայկական ԽՍՀ Կենտգործկոմի նախագահությունը որոշում է հեղափոխական Սերգեյ Միրոնովիչ Կիրովի հիշատակը հավերժացնելու նպատակով քաղաքը վերանվանել Կիրովական: 1939թ. գլխավոր հատակագծով (ճարտարապետներ՝ Ն. Զարգարյան, Ա. Մինասյան) որոշակի է դարձել քաղաքի կերպարը՝ զարգացման նշանակալից հեռանկարներով (արդյունաբերական կենտրոն և ամառանոցային վայր): 1949թ. կազմվել է նոր գլխավոր հատակագիծ (ճարտարապետներ՝ Հ. Դավթյան, Ռ. Գրիգորյան): 1950-ական թվականներին կառուցապատվել է Կիրովի անվան (այժմ՝ Հայքի) հրապարակը՝ քաղաքի վարչակառավարչական կենտրոնը:

19-րդ դարում քաղաքում եղել է երկու եկեղեցի՝ կառուցված 1831թվականին (1828թ.

երկրաշարժից քանդված հին եկեղեցու տեղում) և 1895թ. (ռուսական եկեղեցին): 1978թ. քաղաքում գործել են արդյունաբերական 27 ձեռնարկություններ: Այդ ժամանակաշրջանի արդյունաբերության առաջատարը Ալեքսանդր Մյասնիկյանի անվան քիմիական գործարանն էր: Ժամանակին քաղաքի խոշոր ձեռնարկություններից են եղել քիմիական մանրաթելերի, ճշգրիտ հաստոցների, «Ավտոգենմաշ», «Ավտոմատիկա» գործարանները, տրիկոտաժի, կահույքի, կարի արտադրական միավորումները: «Պոլիմերսուսինձ» գիտաարտադրական միավորումն իր բնագավառի առաջատար գիտական կենտրոններից էր: Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս մեծ համբավ են ունեցել այն ժամանակ Կիրովականի կահույքի, մորթու-մուշտակի, կարի ֆաբրիկաները, «Լոռի» հանքային ջրերի գործարանն ու թեթև արդյունաբերության այլ ձեռնարկություններ:

1992թ. քաղաքը կոչվում է Վանաձոր: Այն Հայաստանի Հանրապետության երրորդ քաղաքն է (80000 բնակչություն՝ 2017թ., իսկ 1988թ.-ին՝ 178000), Լոռու մարզկենտրոնը:

Այսօր քաղաքը մեծամասամբ հաղթահարել է 1988թ. ավերիչ երկրաշարժի հետևանքները և թևակոխել է զարգացման նոր փուլ: Այժմ քաղաքը զարգացման երկրորդ շունչն է առնում: Վանաձորում գործում են 6 բուհ, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը, 10 մարզադպրոց, ընդհանուր առմամբ 19 մշակութային հիմնարկներ՝ երաժշտական դպրոցներ, արվեստի դպրոցներ, երգչախմբեր, մշակույթի տներ, թատրոններ, թեթև արդյունաբերական ձեռնարկություններ և այլն:

## 2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Լոռու մարզկենտրոն Վանաձորը գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում: Զբաղեցնում է 2599,33 հեկտար մակերես՝ Փամբակի և Բազումի լեռների հովտում:

Հեռավորությունը Երևանից ավտոմոբիլային ճանապարհով 125 կմ է, երկաթգծով՝ 224 կմ: Ծովի մակերևույթից բարձր է 1353 մ: Քաղաքի միջով հոսում են Փամբակ, Տանձուտ և Վանաձոր գետերը:

Վանաձորը տարածքային վարչական կենտրոն է, տրանսպորտային հանգույց՝ այստեղով են անցնում Երևան-Թբիլիսի երկաթգիծը, ինչպես նաև միջպետական կարևորագույն ավտոճանապարհներ:

## 3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	551 մմ
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (°C)	-4,2°C
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (°C)	+19,7°C

## 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Կիրովական /1935թ./
2. Համայնքի հեռավորությունը՝	

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

2.1) մայրաքաղաքից (կմ)	125կմ
2.2) մարզկենտրոնից (կմ)	0
2.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	106,8կմ և 87,5կմ
2.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	0
2.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	-
2.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	առկա է
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1353մ
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	2599.33հա
6. Սահմանակից համայնքների անվանումները	Սպիտակ, Ազնվածոր, Արջուտ, Բազում, Գուգարք, Դարպաս, Լեռնապատ, Շահումյան, Փամբակ
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	vanadzor.lori@mta.gov.am
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	vanadzor.am
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	060 650 040;(0322)226-48
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	060 650 757; (0322)411-00
11. Համայնքի հեռախոսային կոդը	(+374)322;
12. Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	2001
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

**5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	78700
2. Գրանցված ծնունդների քանակը	810
2. Մահացության դեպքերի քանակը	946
3. Ամուսնությունների քանակը	461
4. Ամուսնալուծությունների քանակը	142
5. Տնային տնտեսությունների թիվը	Մշտական՝34828, առկա՝26358
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	3731
7. Կենսաթոշակառուների քանակը	18614
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	4844

**6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	2018թ.
1. Գրադարանների քանակը	4 մասսայական և 1 մանկական
2. Արվեստի դպրոցների քանակը	4
3. Երաժշտական դպրոցների քանակը	3
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	20
5. Հանրակրթական դպրոցների քանակը	Ընդ. 30 հիմնական՝ 24, ավագ՝ 6
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	6
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	6
9. Մարզադպրոցների քանակը /համայնքային ենթակայության/	10

**7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ**

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ <sup>2</sup> )	1760761 քառ.մ
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	1065
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	7725

**8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	3,26 հա
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	25,3 քառ.կմ
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1244
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	-
7. Խոզերի գլուխաքանակը	219

**9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ**

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	275
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակառուցվածքային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	220կմ
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	-
6.2 Էքսկավատորների քանակը	-
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	-
6.4 Գրեյդերների քանակը	-
6.5 քանակը	-
6.6 Աղբատար մեքենաների քանակը	4
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	3
6.8 Վակուումային փոշեկուլ մեքենաների քանակը	-
6.9 Ավտոաշտարակների քանակը	-
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	17,478կմ
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	բանկ՝ 10, մասնաճյուղ՝14
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

**10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

*Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)*

	<b>Ընդունված բյուջե</b>	<b>Փաստացի</b>
1. Ընդամենը եկամուտներ	2319102,8	2308502,0
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	425025,0	399589,7
2.1 հողի հարկ	32075,0	31095,9
2.2 գույքահարկ	392950,0	368493,8
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	1337267,1	1337267,1
3.1 դոտացիա	1330965,9	1330965,9
3.2 սուբվենցիա	6301,2	6301,2
4. Մուտքեր հողի օտարումից	236958,2	305757,3

*Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազ. դրամ)*

	<b>Ընդունված բյուջե</b>	<b>Փաստացի</b>
1. Ընդամենը ծախսեր	2319102,8	2248530,3

*Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. դրամ)*

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

	<b>Ընդունված բյուջե</b>	<b>Փաստացի</b>
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	360835,2	456712,4

**Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)**

	<b>Ընդունված բյուջե</b>	<b>Փաստացի</b>
1. Ընդամենը ծախսեր	360835,2	249369,6

**11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ**

1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝	166
1.1 համայնքային ծառայողներ	135
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	297044,3
3. Ավագանու անդամների թվաքանակը	33

**12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

<b>Հիմնախնդիրը</b>	<b>Ակնկալվող լուծումը</b>
<b>Քաղաքաշինության ոլորտ</b>	
84 վթարային շենքեր	3-րդ կարգի վթարային բազմաբնակարան շենքերի ուժեղացում, սեյսմազինվածության բարձրացում
4 տնակային մանկապարտեզ	նոր մանկապարտեզների կառուցում, կամ շենքային պայմաններով ապահովում
համայնքում առկա կիսակառույց շենքեր /Տարոն թաղամաս/	օտարում, կամ վերակառուցում
Վթարային հենապատեր	վերականգնում
Համայնքում առկա կամուրջներ	վերանորոգում
Հանրային զուգարանների բացակայություն	քաղաքի տարբեր հատվածներում հանրային զուգարանների կառուցում
Այգիների անմխիթար վիճակ	Բարեկարգում կանաչապատում, վերականգնում
<b>Մշակույթ</b>	
Տիկնիկային թատրոն	վերանորոգում, գազաֆիկացում, գույքի ձեռքբերում
Ստ. Աղաջանյանի անվան գեղարվեստի դպրոց	վերակառուցում/ վերանորոգում
Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարանի	կապիտալ վերակառուցում/վերանորոգում,
Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատ	կապիտալ նորոգում.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Գր Հախինյանի անվան երաժշտական դպրոց	շենքի վերանորոգում, գազաֆիկացում, ջեռուցման համակարգի տեղադրում,
թիվ 1 մշակույթի տուն	հիմնանորոգում, գազաֆիկացում, ջեռուցման համակարգի տեղադրում
<b>Կրթություն</b>	
4տնակային մանկապարտեզներ	շենքով ապահովում
թվով 16 մանկապարտեզ	հիմնանորոգում, կոսմետիկ վերանորոգում
<b>Կոմունալ</b>	
Ներհամայնքային ճանապարհների անբավարար վիճակ	Փողոցների ասֆալտապատում՝ փողոցների ընթացիկ նորոգում կամ փողոցների կապիտալ նորոգում
Մայրերի անբավարար վիճակ	Մայրերի կապիտալ նորոգում
Գիշերային լուսավորություն	արդիականացում, էներգաարդյունավետ միջոցների կիրառում
Անձրևաջրատար համակարգի անմխիթար վիճակ	վերակառուցում արդիականացում
<b>Տրանսպորտ</b>	
Կանգառներ	Նոր կանգառների կառուցում, արդիականացում
Ճանապարհային երթևեկության	արդիականացում
Ներհամայնքային երթուղիներ	մոնիթորինգ, նոր երթուղիներ
<b>Սպորտ</b>	
Թվով 10 մարզադպրոցներ	դպրոցների արդիականացում, վերակնորոգում/վերակառուցում, գույքի ձեռքբերում
<b>Համատիրություններ և բնակարանային տնտեսություն</b>	
Անբարեկարգ բակեր	բակերի բարեկարգում, արդիականացում
Բազմաբնակարան շենքերի տանիքներ	Թեք և հարթ տանիքների հիմնանորոգում
Թվով 42 չգործող վերելակներ	վերելակների վերանորոգում
Խաղահրապարակներ	խաղահրապարակների կառուցում, արդիականացում
<b>Տուրիզմի զարգացում</b>	
«Մայմեխ լեռնադահուկային համալիրի կառուցում»	կառուցում, տուրիզմի զարգացում, սպորտի զարգացում,
Վանաձորի կիրճի բարեկարգում	կիրճի բարեկարգում



ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Թագավորանիստ» քաղաքի հնագիտական կենտրոնի կառուցում	թանգարանի կառուցում
Գործարար միջավայր	
Աշխատատեղերի բացակայություն	նոր բիզնեսների բացում